**Արձանագրություն N 3**

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ցանցային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/31 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի /այսուհետ նաև՝ Հանձնաժողով/ նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19

06.07.2023թ.
ժամը՝ 11.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Լևոնյան, Տ.Պարսիլյան, Ա.Լալայան, Ա.Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

***1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ***

| ***Չափաբաժնի համարը*** | ***Չափաբաժնի անվանումը*** | ***Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)*** |
|---|---|---|
| 1 | կոմուտատորներ | 620000 |
| 2 | մալուխների բաշխման պահարան | 120000 |

***2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ***

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 03.07.2023թ.-ին ժամը 11:00-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 04.07.2023 թ.-ին ժամը 11:00-ին:

***3. Հայտեր ներկայացրած մասնակիցների տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն***

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Գործունեության հասցեն | Կապի միջոցներ | Էլ. հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «ՍԵԳ» ՍՊԸ | ՀՀ ք. Երևան Կուրղինյան նրբ. 6 շենք, բն.32 | 011-369-000, 077-66-07-86, 055-01-90-60 | seg_tender@mail.ru |

***4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ***

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/31 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

***5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների, հրավերում կատարված փոփոխության մասին***

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:
23.06.2023թ. կատարվել է Հրավերի փոփոխություն:

## 6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

| Հ/Հ | Մասնակից | Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | «ՍԵԳ» ՍՊԸ | 648000 | 0 % | 648000 | 620000 | 0 % | 620000.00 | |
| 2 | | 128000 | 0 % | 128000 | 126000 | 0 % | 126000.00 | Մերժված |

Աճուրդն ամփոփվել է 04.07.2023 թվականին: Ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է «ՍԵԳ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Մասնակից):

### *7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր/ ուսումնասիրման նպատակով հանձնաժողովի նիստը հետաձգելու վերաբերյալ*

06.07.2023թ. ժամը 11:00-ին կայացած նիստում Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրման նպատակով նիստը հետաձգել և հաջորդ նիստ հրավիրել 07.07.2023թ.-ի ժամը 11.00-ին:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

### *8. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին*

Հանձնաժողովն ուսումնասիրելով Մասնակցի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

Հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 1-ին չափաբաժնում «Արտադրող» սյունակը ենթակա է շտկման, անհրաժեշտ է նաև նշել առաջարկվող ապրանքն արտադրող կազմակերպությունների կազմակերպաիրավական ձևերը: Ապրանքի ամբողջական նկարագրում՝ 1-ին չափաբաժնի «Տեխնիկական բնութագիր» սյունակում «Պրոցեսորը և հիշողությունները՝ **առնվազն** ARM Cortex-A9 @ 800 MHz, **առնվազն** 512 MB SDRAM, **առնվազն** 256 MB flash, **առնվազն** 1.5 MB packet buffer,....», «Ապրանքի երաշխիքային ժամկետը՝ **առնվազն** 1 տարի» հատկանիշներում առկա է «**առնվազն**» բնութագրիչը, մինչդեռ անհրաժեշտ է հստակ և ամբողջությամբ նկարագրել առաջարկվող ապրանքի հատկանիշները: «Արտադրող» և «Ապրանքային նշան» սյունակներում անհրաժեշտ է հստակ նշել այն արտադրողի անվանումը և ապրանքային նշանը, որի առաջարկած ապրանքը հստակ համապատասխանում է հրավերով սահմանված տեխ.բնութագրին: «Ապրանքը պետք է լինի չօգտագործված (նոր)» նախադասությունը անհրաժեշտ է ներկայացնել մասնակցի տեսակետից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/31 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց 07.07.2023թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՍԵԳ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

***9.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին***

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 11.07.2023թ. ժամը 11:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

***10. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ***

Նիստը վերսկսվեց 11.07.2023թ. ժամը 11:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «ՍԵԳ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «ՍԵԳ» ՍՊԸ-ի հայտը, այդ թվում՝ eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:*

***11. Տեղեկություն՝ ընտրված մասնակցի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման, Ընթացակարգի 2-րդ չափաբաժինը չկայացած հայտարարելու վերաբերյալ***

11.07.2023 թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

11.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «ՍԵԳ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակից:

11.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

11.3 Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ անգործության ժամկետը կիրառելի չէ:

11.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

11.5 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով աճուրդն ամփոփվելու պահին Մասնակցի ներկայացրած գինը գերազանցել է Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար գնման հայտով սահմանված գինը և Համակարգի կողմից մերժվել է վերջինիս հայտը, ուստի Հանձնաժողովը որոշեց՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Ընթացակարգի 2-րդ չափաբաժինը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարել չկայացած:

11.6 Հաստատել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/31 ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Լևոն Լևոնյան

_____ Տիգրան Պարսիլյան

_____ Անժելա Լալայան

_____ Արմենակ Մանուկյան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան